ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---- » ---------- 2021թ. N ---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ՓՈՂՈՑԻ Հ.6 ՇԵՆՔԻ Հ.148՝ 16.5ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.315-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Դ. Անհաղթի փողոցի հ.6 շենքի հ.148՝ 16.5քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 30.10.2020թ. հ.30102020-01-0178 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սվետլանա Դավիդկովային:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ՓՈՂՈՑԻ Հ.6 ՇԵՆՔԻ Հ.148՝ 16.5 ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով նախատեսվում է Սվետլանա Դավիդկովայի կողմից զբաղեցրած Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դ. Անհաղթի փողոցի հ.6 շենքի հ.148՝ 16.5քմ ընդհանուր մակերեսով բնակարանի նկատմամբ ձևակերպել վերջինիս սեփականության իրավունքը:

Դ.Անհաղթի փողոցի հ.6 շենքի հ.148՝ 16.5 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 30.10.2020թ.-ի հ30102020-01-0178 վկայականի տվյալների՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն ՀՀ Ոստիկանության ԱՎՎ Քանաքեռ-Զեյթուն բաժանմունքի կողմից 14.10.2020թ. տրված հ.8/5-1882 գրության՝ Դ.Անհաղթի փողոցի հ.6 շենքի հ.148 բնակարանում հաշվառված են՝ Սվետլանա Սերգեյի Դավիդկովան և Ալեքսանդր Արմենի Իրիցյանը, որը 22.09.2020թ.-ին տվել է համաձայնություն քննարկվող բնակարանը Սվետլանա Դավիդկովայի անվամբ սեփականաշնորհվելու վերաբերյալ: Ըստ ՀՀ Ոստիկանության ԱՎՎ Քանաքեռ-Զեյթուն բաժանմունքի կողմից 13.03.2020թ. տրված հ.916737 ԲՊՌ հաշվառման մասին տեղեկանքի՝ Սվետլանա Դավիդկովան տվյալ հասցեում հաշվառված է 22.06.2009թ.-ից:

«Ապավեն» համատիրության նախագահի կողմից 18.11.2020թ. տրված հ.9 տեղեկանքի համաձայն՝ Սվետլանա Դավիդկովան՝ 2000 թվականից փաստացի բնակվում է Դ. Անհաղթի փողոցի հ.6 շենքի հ.148 բնակարանում: Տվյալ փաստը վկայել են նաև Դ.Անհաղթի փողոցի հ.6 շենքի բնակիչները՝ 17.11.2020թ. իրենց կողմից արված հայտարարությամբ:

Ըստ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 20.11.2020թ. տրված գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ հ.ԱՏ-20112020-99-0096 տեղեկանքի՝ Սվետլանա Դավիդկովայի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին 5 տարիների ընթացքում ՀՀ-ում նրա կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2020թ.-ի դեկտեմբերի 23-ի հ.315–Ն որոշման հավելվածի (Ծրագրի) 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում նաև բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2020թ.-ի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի (Ծրագրի) 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքները, ուստի ք.Երևան Դ.Անհաղթ փողոցի հ.6շենքի հ.148 հասցեում գտնվող բնակարանի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևան քաղաքի ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՓՈՂՈՑԻ Հ.6 ՇԵՆՔԻ Հ.148՝ 16.5 ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Դավիթ Անհաղթ փողոցի հ.6 շենքի հ.148՝ 16.5քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՓՈՂՈՑԻ Հ.6 ՇԵՆՔԻ Հ.148՝ 16.5ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Դավիթ Անհաղթ փողոցի հ.6 շենքի հ.148՝ 16.5քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ